ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 15.09/360
15.09.2014 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

Պատճենը՝
ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Կոստանյան,

2014թ. սեպտեմբերի 10-ին իր իրավունքների պաշտպանության համար կազմակերպություն է դիմել թիվ 19112913 քրեական գործով մեղադրյալ Տիգրան Նորիկի Մելիքյանը: Վերջինս դիմումում հայտնել է, որ 2010 թվականից աշխատել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության պետական տեսչության (այսուհետ՝ ԲՆԱ ԲՊՏ) Լոռու տարածքային բաժնում՝ որպես տեսուչ:

Կազմակերպությանն ուղղված դիմումում քաղաքացին՝ վկայակոչում է մի շարք պաշտոնատար անձանց կողմից կատարված օրինազանցությունների, պաշտոնական լիազորությունների չարաշահումների մասին, որոնք կատարվել են իր՝ ԲՆԱ ԲՊՏ Լոռու տարածքային բաժնում տեսուչ աշխատելու ժամանակահատվածում:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է անօրինական ծառահատումներին, որն ըստ քաղաքացու դիմումի կատարվել է Թումանյանի ոստիկանության բաժնի պետ Արթուր Հարությունյանի և ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Անուբախ Համբարյանի հովանավորության ներքո: Վերը նշված պաշտոնատար անձինք բազմիցս սաստել են տեսուչներին՝ չարձանագրել ապօրինի ծառահատումները, քանի որ դրանով ամենաբարձր ցուցանիշներ ունեցող Լոռու մարզային վարչության վրա կթողնեն բազմաթիվ չբացահայտված գործեր և իրենք այդ ամենը բացահայտելով ձեռք կբերեն վերը նշված պաշտոնատար անձանց թշնամանքը:

Տ. Մելիքյանը հայտնում է, որ տվյալ ժամանակահատվածում Անուբախ Համբարյանը ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ էր և ապօրինի փայտանյութի ամբողջ շարժը իրականացվում էր նրա վերահսկողության ներքո և Լոռու մարզի բոլոր

անտառապետերը իրենց տնօրենների միջոցով ամսական վարձատրություն էին տալիս Անուբախ Համբարյանին, որը շարունակվում է մինչ օրս:

Ըստ քաղաքացու դիմումի՝ «Դսեղի» անտառտնտեսության «Մոտկորի» անտառապետ Թովմա Մաթևոսյանը համարվում էր Դսեղի անտառտնտեսության ամեաակտիվ ծառահատող անտառապետը, ով որպես սեփականություն ուներ տրակտորներ՝ անտառում ճանապարհ հարթելու,Գազ 66 և Զիլ 131 մակնիշի մեքենաներ՝ անտառից փայտանյութը իջեցնելու, 2 հատ Զիլ 130 և 2 հատ կամազ–կոնտեյներ՝ փայտանյութը Արագածոտնի մարզի,Արմավիրի մարզի և Շիրակի մարզի գյուղեր տեղափոխելու և այնտեղ վաճառելու համար: Յուրաքանչյուր տարվա մայիսից մինչև դեկտեմբեր ամիսները ամեն օր, բացի ուժեղ հորդառատ անձրևային օրերից, նա իր մեքենաների հետ միասին բարձում էր շուրջ 30 բեռնատար «Կամազ» և «Զիլ» մեքենաներ: Բացի այդ նա ապօրինի հատված ծառերից շինափայտ էր վաճառում Դսեղ գյուղի շուրջ 30 աթոռի ցեխերին, մանրահատակի և տախտակի սղոցարաններին: Նա այդպես աշխատել է շուրջ 6 տարի: Իր աշխատանքից նա վարձահատույց էր լինում Ոստիկանության Թումանյանի բաժնի պետ Ա.Հարությունյանին, Լոռու մարզային վարչության պետ Անուբախ Համբարյանին:

Ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի,Գուգարքի, Սպիտակի բաժնի պետերի համար յուրաքանչյուր «Կամազ-կոնտեյներից» հավաքվում էր 15000-ական դրամ, այսինքն մի «Կամազից»՝ 45000 դրամ, յուրաքանչյուր «Զիլ 130» բեռնատարից՝ 10000-ական դրամ, այսինքն՝ 30000 դրամ, իսկ «Ֆորդ» մակնիշի մեքենաներից յուրաքանչյուրից՝ 50000-ական դրամ ամսական: Դսեղի անտառտնտեսության տարածքից օրական դուրս էր գալիս մոտ 50 բեռնատար, այդ թվում 20 «Կամազ» և 30 «Զիլ» ավտոմեքենա և մոտ 20 ֆորդ մակնիշի մեքենա: Եթե գումարենք թվերը կստացվի, որ Ոստիկանությունը օրական միջինը 2.000.000 դրամ շահույթ էր ունենում միայն փայտանյութ տեղափոխողներից, իսկ աթոռի ցեխերից և սղոցարաններից յուրաքանչյուրից ամսական 200000-ական դրամ և 8000000-ական դրամ:

Յուրաքանչյուր բեռնատար մեքենա ամսեկան 1-2 անգամ գնում է օրինական փայտանյութ, իսկ ամսվա մնացած օրերը այդ փաստաթղթով ապօրինի տեղափոխում է փայտանյութը: Փաստաթղթում առկա են բաց թողնման ամսաթվեր,որոնք հիմնականում չեն լրացվում և տրվում են վարորդներին և բացատրվում, որ դրանք լրացնեն միայն վտանգի դեպքում,երբ որ անծանոթ ծառայության աշխատակից կանգնեցնի ավտոմեքենան ստուգելու և ասեն, որ անտառից փայտանյութը ուշ են դուրս բերել և ուշ են դուրս եկել,մի քանի օր մնացել են մինչև փայտը կբարձեն: Յուրաքանչյուր տարվա սկզբին «Հայանտառը» Դսեղի անտառ-տնտեսությանը տալիս է շուրջ 5000 մ³ հատելու թույլտվություն՝ սանիտարական հատումների նպատակով, որը եթե հաշվենք ըստ մեքենաների թվի, պետք է սպառվեր 10-20 օրում, սակայն «Դսեղի» անտառտնտեսությունը այդպես աշխատում է տարեկան 7 ամիս:

Տ. Մելիքյանը կազմակերպությանն ուղղված դիմումում հայտնում է, որ անտառներում նշում էին ապօրինի հատած ծառերը, համարակալում կտրած կոճղերը, որ անտառ մտնողը մտածի, թե դա օրինական հատատեղ է, տարբեր հատվածները ծառազրկելուց հետո

տրակտորով հարթեցնում են հողը՝ ծածկելով կոճղերը, արհեստական փակում դեպի կտրած ծառերի անտառամասեր տանող ճանապարհը: Թովմա Մաթևոսյանը բարձելով իր մեքենաները տալիս էր ընդամենը «Կամազի» համար 30մ³՝ 180.000 դրամ բանվորափող, 100.000դրամ վառելիքի փող, իսկ այդ փայտանյութը Աշտարակում վաճառում էր 800.000դրամ, որից 20.000 տալիս էր վարորդին և նրա եկամուտը մի մեքենայից կազմում էր 500.000 դրամ, որից էլ նա հանում էր վերը նշված փայերը Ոստիկանությանը, «Հայանտառին», մարզի դատախազին և այլոց:

Ըստ Տ. Մելիքյանի հայտնած տեղեկությունների 2011թ. ԲՆԱ ԲՊՏ պետ Արսեն Ավագյանի նախաձեռնությամբ "Դսեղի"անտառտնտեսությունում իրականացվել է հերթական տարեկան ստուգումը: Ստուգումն իրականացվել է բնապահպանական պետական տեսչության անտառների բաժնի կողմից և հայտնաբերվել են ապօրինի անտառահատումներ, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն 57.000.000 (57մլն) դրամ բնությանը պատճառված վնասի մասին: Դսեղի անտառտնտեսության նախկին տնօրեն Մարտուն Ավագյանը ստուգման արդյունքները բողոքարկել է բնապահպանության նախկին նախարարին և ստուգումը չեղյալ է հայտարարվել, քանի որ միջամտել են բազմաթիվ պաշտոնյաներ, մասնավորապես, Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանը, Լոռու մարզի ոստիկանապետ Անուբախ Համբարյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը, պատգամավորներ: Այդ 57 մլն դրամի մեջ Թ.Մաթևոսյանի տնօրինության տակ գտնվող Մոտկորի անտառտնտեսությունում բնությանը պատճառած վնասի ամենամեծ չափը մնացած 3 անտառտնտեսությունների համեմատ կազմել է 12.000.000 (12մլն) դրամ:

Ըստ Տ. Մելիքյանի Լոռու տարածքային բաժին բնապահպանական տեսչություն գրություն է ստացվել Ոստիկանության Թումանյանի բաժնից այն մասին ,որ հայտնաբերվել է 3 հատ Ֆորդ մակնիշի և 1 Զիլ 130 մակնիշի բեռնատար ավտոմեքենաներ՝ բեռնված ապօրինի փայտանյութով: Այս գրությունով ոստիկանությունը խնդրում էր տրամադրել մասնագետ մեքենաների թափքի վրա առկա փայտանյութը զննելու, ապօրինի ծառահատումների կոճղերը չափագրելու, բնությանը պատճառված վնասի չափը որոշելու համար: Մայիսի 14-ին Տիգրան Մելիքյանը և նույն բաժնի 3 տեսուչներ Ա.Հարությունյանը, Ս.Կոծինյանը, Ա.Ղարագյոզյանը իրենց բաժնին պատկանող ծառայողական մեքենայով (Նիվա ԼԼ 11) Վանաձորից մեկնել են Ալավերդու Թումանյանի ոստիկանության բաժին և չափագրել մեքենաների վրա առկա փայտանյութը և պայմանավորվել, որ հաջորդ օրը Ոստիկանության աշխատակիցների և անտառապետերի հետ կգնան անտառ, որպեսզի վարորդները մատնացույց անեն կտրած ծառերի կոճղերը և իրենք չափագրենք և որոշեն վնասի չափը: Ոստիկանության աշխատակիցները ասեցին, որ Զիլ 130 մակնիշի մեքենայի վրա առկա փայտանյութը, որը ամենաշատն էր ըստ մեքենայի վարորդի և Թ. Մաթևոսյանի ասելու կտրվել է Թ. Մաթևոսյանի տնօրինության տակ գտնվող Մոտկորի անտառտնտեսությունից, որին տեսուչները պատասխանել են, որ անհրաժեշտ է,որ հաջորդ օրը ներկա լինի Թ.Մաթևոսյանը, որ կոճղերը

արձանագրվեն Թ.Մաթևոսյանի ներկայությամբ, որպեսզի հետագայում տարաձայնություններ չառաջանան կոճղերի քանակի և պատճառված վնասի չափի վերաբերյալ:

Մայիսի15-ին ըստ պայմանավորվածության տեսուչներն իջել են ծառայողական մեքենայով դեպի Զաղիձորի լցակայան, որպեսզի հանդիպեն ոստիկաններին և Թ. Մաթևոսյանին, բարձրանան անտառ և զննեն մատնացույց արվող ծառերի կոճղերը: Զաղիձորի գազալցակայայանում հանդիպել են Թ.Մաթևոսյանին և Ալավելդու բաժնի Զիլ 130 մակնիշի մեքենայի սեփականատեր Ռուշանին: Թովմա Մաթևոսյանը մոտենալով տեսուչներին ասել է, որ ոստիկանները արդեն բարձրացել են դեպի վերև, իսկ Տ. Մելիքյանը պատասխանել է, որ իրենք պետք է գնան այնտեղ, որպեսզի ծառ հատողը մատնացույց անի, իրենք էլ չափագրեն և արձանագրեն:

Այնուհետև Թ. Մաթևոսյանը վրդովվել է և Տ. Մելիքյանի ասել է, որ դա իր տարածքն է, բայց քանի որ իր անտառտնտեսություն մտնելով նրանք կհայտնաբերեն բազմաթիվ կտրված ծառերի կոճղեր,այլ ոչ թե մի Զիլ մեքենայի թափքով, առաջարկել է նրանց վարձատրել, որի դիմաց տեսուչները չեն մտնի իր անտառտնտեսություն և իրենց կտանեն ճանապարհի եզրին կամ գյուղի շրջակայքում մի երկու հատ հին ծառ մատնացույց կանեն և միայն դրանք կարձանագրեն, վերջում էլ Մաթևոսյանը տեսուչներին պատիվ կտա որևէ ռեստորանում:

Թ. Մաթևոսյանը ասել է նաև, որ ինքը եղել է միլպետ Արթուր Հարությունյանի մոտ,որը իրեն շատ բարեհամբույր ընդունել է, նույնիսկ վեր է կացել և եկել, իրեն բարևել,բոլոր հարցերն էլ լուծված են և ոստիկաններն էլ առարկություն չունեն այս հարցի նման տարբերակով լուծմանը: Ինչպես նաև ավելացրել է, որ Տ. Մելիքյանը ընդամենը սովորական տեսուչ է և իրեն պահի իր պաշտոնին համապատասխան, քանի որ եթե ոստիկանապետը համաձայն է հարցի նման տարբերակով լուծմանը, ինչու է Մելիքյանը առարկում:

Թ. Մովսիսյանը ասել է, որ երեկոյան կզանգի Տ. Մելիքյանին կասի ինչ է արել, եթե անհրաժեշտություն լինի վաղը կգան տեսուչները, կմտնեն անտառտնտեսություն և կկատարեն իրենց զննությունը:

Դրանից հետո Տ. Մելիքյանը գնացել է տուն և զանգահարել Լոռու տեսչության պետին տեղեկացրել, որ Թ.Մաթևոսյանը հրաժարվում է գալ իրենց հետ և մարդ չի տրամադրում իր անտառտնտեսությունում զննություն կատարելու համար, սակայն պայմանավորվել են, որ երեկոյան կզանգահարեն միմյանց և նրա հետ կպայմանավորվեն հետագա գործողությունների համար: Ի պատասխան պետն ասել է, որ ինքն հաջորդ օրն առավոտյան կգա և ամբողջ բաժնով կգնան չափագրումներն իրականացնելու և հանձնարարել է Տ. Մելիքյանին պայմանավորվել Թ. Մովսիսյանի հետ:

Ըստ Տիգրան Մելիքյանի, նամակում նշված անօրինականությունները դեռ մի մասն են կազմում այն հանցագործությունների, որի մասին ինքը կհայտնի հետագայում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Տիգրան Մելիքյանի կողմից ներկայացված տեղեկությունները՝ դիմում եմ Ձեզ՝

1. հարուցել քրեական գործ (քրեական գործի հարուցման մասին որոշումը տրամադրել դիմումատուին),

2. Դսեղի անտառտնտեսությունում ծառահատումների վերաբերյալ իրականացնել ստուգումներ:

Կից ներկայացվում է հատված ծառերի կոճղերի նկարները էլեկտրոնային կրիչով (250 նկար):

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am